

**ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 20/1**

**22 օգոստոսի 2016թ.**

Քննարկվեց «Ռան-Օյլ» ՍՊԸ 08.07.2016թ. գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 01.07.2016թ. թիվ 1003383 ակտի դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 06.05.2016թ. թիվ 1003383 հանձնարարագրի համաձայն «Ռան-Օյլ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 01.07.2016թ. թիվ 1003383 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել ընդամենը 46.092.873 դրամ:

Սույն գործին առնչվող փաստական հանգամանքների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ Ակտի դեմ բերված գանգատի վերաբերյալ իրավաչափ որոշում կայացնելու համար անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկատվություն ստանալ ընկերության կողմից ներկայացված և սույն գործին անմիջականորեն առնչվող փաստաթղթերի վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

«Ռան-Օյլ» ՍՊԸ 08.07.2016թ. գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**